Հավելված
Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2012 թվականի հունիսի 13-ի N 208Ն որոշման

Հավելված N 3
Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2006 թվականի դեկտեմբերի 27-ի N 358Ն որոշմամբ
հաստատված էլեկտրական էներգիայի
մատակարարման և օգտագործման կանոնների

Կ Ա Ր Գ

ՆՈՐ ՍՊԱՌՈՂԻ ԿԱՄ ՍՊԱՌՈՂԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՎՈՂ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ

1. Սույն կարգով սահմանվում են մատակարարի կողմից նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման համար (այսուհետ՝ միացման դիմում) սույն կանոնների 13.2 կետով նախատեսված անհրաժեշտ փաստաթղթերը Դիմող անձի հայեցողությամբ էլեկտրոնային եղանակով մատակարարին ներկայացնելու պայմանները:
2. Միացման դիմումներն էլեկտրոնային կարգով ներկայացվում են հետևյալ հասցեով՝ www.ena.am/nor_miacum:
3. Դիմող անձը միացման դիմումը սույն կարգի 2-րդ կետում նշված հասցեում լրացնելուց բացի մատակարարին է ուղարկում սույն կանոնների 13.2 կետով նախատեսված անհրաժեշտ փաստաթղթերի տեսաներածված պատճենները՝ ԴՈԿ (DOC), ԴՈԿԻՔՍ (DOCX), ՊԻԴԻԷՖ (PDF) կամ ՋՓԵԳ (JPEG) ֆորմատների ֆայլերի տեսքով:
4. Միացման դիմումը համարվում է ներկայացված մատակարարի կայքում մուտք լինելու օրը: Մատակարարի մոտ միացման դիմումը մուտքագրված լինելու փաստը հավաստվում է հետադարձ ծանուցմամբ՝ էլեկտրոնային համակարգում դիմումը գրանցելուց անմիջապես հետո, որը պարունակում է x-նիշանոց ծածկագիր:
5. Մատակարարը, միացման դիմումը ստանալու օրվանից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում, ուսումնասիրում է այն և դիմումն ընդունելու կամ մերժելու (ներկայացված տեղեկատվությունը և նյութերը (փաստաթղթերը) թերի լինելու դեպքում) մասին Դիմող անձին տեղեկացնում է դիմումի մեջ նշված էլեկտրոնային հասցեով և հեռախոսահամարով: Բացի այդ, դիմումի ուսումնասիրման արդյունքները պետք է արտածվեն նաև մատակարարի էլեկտրոնային համակարգում:

6. Ներկայացված փաստաթղթերը թերի լինելու վերաբերյալ նախազգուշացում ստանալու դեպքում Դիմող անձը կարող է ուղարկել պակաս ներկայացված կամ ուղղված փաստաթղթերի տեսաներածված պատճենները:
7. Դիմող անձը սույն կարգի 6-րդ կետով նախատեսված անհրաժեշտ նոր փաստաթղթերը կամ նյութերը ներկայացնում է ի լրումն ներկայացված դիմումի՝ արդեն իսկ իրեն տրամադրված x-նիշանոց ծածկագրով համակարգ մուտք գործելու միջոցով:
8. Դիմող անձը իրեն տրամադրված x-նիշանոց ծածկագրով կարող է մուտք գործել էլեկտրոնային համակարգ, որտեղ արտացոլված է հետևյալ տեղեկատվությունը՝
   1) միացման դիմումի համարը,
   2) միացման դիմումի՝ մատակարարի էլեկտրոնային համակարգում ընդունված լինելու ամսաթիվը,
   3) Դիմող անձի անունը, ազգանունը (իրավաբանական անձի անվանումը), հասցեն,
   4) պահանջվող հզորությունը, լարման մակարդակը,
   5) միացման տեսակը (միաֆազ, եռաֆազ),
   6) էլեկտրական ցանցին միացման պայմանագիր (այսուհետ՝ միացման պայմանագիր) կնքելու առաջարկի ներկայացնելու ամսաթիվը,
   7) էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու ամսաթիվը,
   8) միացման վճարի վճարման առավելագույն ժամկետը՝ ներառյալ կանխավճարի կատարման առավելագույն ժամկետը,
   9) այլ պայմաններ (այդպիսիք լինելու դեպքում):
9. Մատակարարը, միացման վճարի վճարման վերջնաժամկետից (այդ թվում նաև կանխավճարի կատարման վերջնաժամկետից) մեկ օր առաջ, վճարումը կատարելու մասին հիշեցում է ուղարկում Դիմող անձին՝ միացման դիմումի մեջ նշված էլեկտրոնային հասցեով:
10. Միացման դիմումը ընդունված լինելու վերաբերյալ Դիմող անձին տեղեկացնելու օրվանից սկսված՝ մատակարարը սույն կանոնների 13.3 կետով նախատեսված կարգով ընթացք է տալիս էլեկտրոնային համակարգի միջոցով ստացված միացման դիմումին:
11. Միացման դիմումը մատակարարի էլեկտրոնային համակարգում ընդունվելու օրվանից հետո, սույն կանոնների 13.3 և 13.4 կետերով նախատեսված կարգով և ժամկետներում համապատասխան գործողություններն ավարտելուց հետո, մատակարարը դիմումի մեջ նշված էլեկտրոնային հասցեով և հեռախոսահամարով Դիմող անձին ներկայացնում է

միացման պայմանագիր կնքելու առաջարկ՝ առաջարկին կցելով մատակարարի կողմից միակողմանի ստորագրված միացման պայմանագրի տեսաներածված պատճենը:

12. Միացման պայմանագրի բնօրինակը կնքվում է դիմումին կից ներկայացված այն փաստաթղթերի բնօրինակները ներկայացնելու դեպքում, որոնք սույն կանոններով սահմանված կարգով մատակարարին պետք է ներկայացվեն բնօրինակի տեսքով:
13. Մատակարարը սույն կարգի 12-րդ կետում նշված փաստաթղթերի բնօրինակներն անմիջապես տեղում համեմատում է դիմումին կցված փաստաթղթերի տեսաներածված պատճենների հետ՝ դրանց պատշաճ լինելու մեջ հավաստիանալու նպատակով, որից հետո փաստաթղթերի բնօրինակները վերադարձվում են Դիմող անձին: Նշված փաստաթղթերի բնօրինակները չներկայացվելու դեպքում միացման պայմանագիրը չի կնքվում: